

Для рассмотренного варианта параметры ненадежности нейронов [1] равны:  $E(u)=0,1250$ ,  $E(w)=0,0625$ .

## ЛИТЕРАТУРА

1. Мкртчян С.О. Нейроны и нейронные сети. - М.: Энергия, 1971. - 200 с.

ГИУА

5.09.1995

Изв. НАН и ГИУ Армении (сер. ТН), т. XLIX, № 2, 1996, с. 114-117.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

### ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԾՆՆԴՅԱՆ 60 - ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառի ականավոր ներկայացուցիչ, պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ԵՊՀ-ի ռեկտոր ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը:



Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը ծնվել է 1936 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մատաղիս գյուղում բանվորի ընտանիքում: 1953 թ. ավարտել է հայրենի գյուղի դպրոցը, իսկ 1958 թ.՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ:

Գիտական գործունեությունն սկսել է ՀԳԱԱ Բյուրականի աստղադիտարանում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1960 թվականից աշխատում է ՀԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում:

1961 թվականին Ռ. Մարտիրոսյանն ընդունվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Պ. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ Նորբեյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ա. Պրոխորովի ղեկավարությամբ զբաղվել է ռադիոաստղագիտության ոլորտում կիրառ-

վող լայնաշերտ քվանտային ուժեղացուցչի ստեղծմամբ: Նրա մշակած լայնաշերտ երկրեզոնատորային քվանտային ուժեղացուցիչը ԽՍՀՄ-ում առաջինը կիրառվեց միջաստղային չգրգռված ջրածնի սպեկտրային հետազոտություններում: հնարավորություն տալով պարզելու չեզոք ջրածնի բաշխման նույր կառուցվածքը տիեզերքում: Տեսագայում համակարգն օգտագործվեց նաև լազերային ճառագայթման մոդուլավորման խնդիրներում: Այս աշխատանքների հիման վրա 1964 թ. հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ Ռ. Մարտիրոսյանը վերադարձել է Հայաստան:

1960-ական թվականներին Ռ. Մարտիրոսյանը ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում հիմնադրեց գիտական նոր ուղղություն՝ կապված քվանտային ուժեղացուցիչների ստեղծման և տարբեր ալիքային տիրույթների քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքների մշակման հետ: Նա նախ ձեռնամուխ եղավ ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի լաբորատորիայի կազմակերպմանը, որտեղ և Հայաստանում առաջին անգամ ստացվեց հեղուկ հելիում՝ մեզանում հիմք դնելով ցածրջերմաստիճանային ֆիզիկական հետազոտություններին:

Էլեկտրամագնիսական ճառագայթման միլիմետրային ալիքների տիրույթի քվանտային ուժեղացումը ենթադրում էր մեծ դժվարությունների հաղթահարում, բանգի նախ՝ չկային այդ տիրույթի համար անհրաժեշտ ակտիվ նյութեր, երկրորդ՝ քառաչափված չէին քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքները: 70-ական թվականներին Ռ. Մարտիրոսյանն սկսեց աշխատանքների մի մեծ շարք՝ նվիրված այդ խնդիրների հետազոտմանը: Նոր ակտիվ նյութերի որոնումը պայանավորված էր պինդ մարմնի ֆիզիկայի այնպիսի բարդ խնդիրների հաղթահարմամբ, ինչպիսիք են տարբեր պարամագնիսական բյուրեղների ռելաքսացիոն և սպեկտրային ուսումնասիրությունները ջերմաստիճանային լայն տիրույթում: Աշխատանքներն ավարտվեցին միլիմետրային ալիքների տիրույթում քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքների ստեղծմամբ և քվանտային ուժեղացուցիչների համար նոր ակտիվ նյութերի առաջարկմամբ: Այս ուղղությամբ Ռ. Մարտիրոսյանի հետազոտություններն ամփոփվեցին 1980 թ. պաշտպանած դոկտորական ատենախոսության մեջ: Միլիմետրային ալիքների տիրույթում քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքների մշակման համար Ռ. Մարտիրոսյանը 1989 թ. արժանացել է Ուկրաինական Հանրապետության պետական մրցանակի:

Ռ. Մարտիրոսյանի աշխատանքների մի այլ շարք վերաբերում է ռադիոտիրույթի զգայուն ընդունիչ համակարգերի ստեղծմանը և կիրառությանը հեռավոր տիեզերական կապի, Երկրի բնական գոյապաշարների ուսումնասիրության, ռադիոաստղագիտական հետազոտությունների, գիտության և տեխնիկայի այլ բնագավառներում: Հատկապես մեծ կարևորություն ունի Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ստեղծված ընդունիչ համակարգերի կիրառությունը հեռավոր տիեզերական կապի ոլորտում: Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում նրա ղեկավարած գիտական խումբը մշտապես մասնակցել է միութենական և միջազգային տիեզերական կարևորագույն հետազոտական ծրագրերի: Տիեզերքի ուսումնասիրման գործում ունեցած ծառայությունների համար Ռ. Մարտիրոսյանը 1987 թ. պարգևատրվել է Գագարինի անվան հուշամեդալով, իսկ 1988 թ. արժանացել գիտության և տեխնիկայի ասպարեզի Հայաստանի պետական մրցանակին:

80-ական թվականներին Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում սկզբնավորվել է Երկրի բնական պաշարների ուսումնասիրման գիտական նոր բնագավառ: Այս ուղղությամբ կատարվող հետազոտություններն առնչվում են Երկրի մակերևույթի ռադիոճառագայթման ընդունմանը և մշակմանը, մթնոլորտում տեղի ունեցող ֆիզիկական երևույթների բանական գնահատման ուսումնասիրմանը, ռադիոֆիզիկական նոր մեթոդների և տարբեր տեսլծանանը:



"Интеркосмос" և "Природа" միջազգային գիտական ծրագրերի սահմաններում ստեղծվել են ուղեծրային ընդունիչ համալիրներ, որոնք տեղակայված են թռչող տարրեր կայաններում և արբանյակներում՝ Երկրի բնական պաշարներն ռատամնափրելու համար:

Ռ. Մարտիրոսյանի Վերջին տարիների գիտական հետազոտություններն առնչվում են բարձրջերմաստիճանային գերհաղորդիչ նյութերի ոչ գծային հատկությունների ուսումնասիրմանը: Առաջին անգամ դիտարկվել է գերբարձր հաճախությունների տիրույթի սեփական ռադիոճառագայթումը բարձրջերմաստիճանային գերհաղորդիչներում: Այդ ճառագայթման բնութագծերի ուսումնասիրման համար ինստիտուտում ստեղծված չափիչ համակարգերը կիրառություն են գտել Ճապոնիայի, Տարավային Կորեայի, Գերմանիայի և Տունաստանի տարրեր գիտական կենտրոններում:

Ռ. Մարտիրոսյանը 1980 թվականից ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենն է: Նրա ղեկավարությամբ ինստիտուտում կատարված գիտական մշակումները լայն ճանաչում ունեն ԱՊՀ և արտասահմանյան այլ երկրներում, որոնց հետազոտական մի շարք կենտրոնների հետ կնքվել և իրականացվում են գիտական համաձայնագրեր:

Ռ. Մարտիրոսյանի՝ որպես գիտական կազմակերպիչ, գործունեության մյուս ուղղությունը ինստիտուտում կատարված մշակումների արդյունքները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելն է: Նրա նախաձեռնությամբ Գորիսում հիմնված գործարանն արտադրում է անկյան թվային փոխակերպիչներ, որոնք լայնորեն կիրառվում են տնտեսության տարրեր բնագավառներում:

Ռ. Մարտիրոսյանը շուրջ 160 գիտական աշխատանքների հեղինակ է, որոնց մեծ մասը տպագրված է միջազգային գիտական ամսագրերում: Բվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքներին նվիրված նրա մենագրությունը հրատարակվել է Շվեդիայում՝ Չալմերս համալսարանի կողմից: Նա ռադիոֆիզիկայի բնագավառում միջազգային ճանաչում ունեցող գիտնական է, միջազգային "Интеркосмос" գիտական միության, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ազգային ակադեմիայի «Ռադիոաստղագիտություն» և «Ֆիզիկական էլեկտրոնիկա» գիտական խոշորողների անդամ:

Ռ. Մարտիրոսյանը «ՀՀ ԳԱԱ և ՀՊՀՏ տեղեկագիր, «Տեխնիկական գիտությունների սերիա» ամսագրի գլխավոր խմբագիրն է: Իր ծանրակշիռ գիտական վաստակի համար նա 1986 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ իսկական անդամ:

Ռ. Մարտիրոսյանը գիտական բեղմնավոր գործունեությանը զուգընթաց զբաղվում է մանկավարժական աշխատանքով՝ 1965 թ.-ից ցայսօր դասավանդելով Երևանի պետական համալսարանում: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. ռադիոֆիզիկայի ֆակուլտետում կազմակերպվել է գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոնը, որը վարել է հիմնադրման օրվանից մինչև 1968 թ.:

1993 թվականից Ռ. Մարտիրոսյանը Երևանի պետական համալսարանի ռեկտորն է: Ռեկտորի պաշտոնակալության երկուսուկես տարում ծնունդ են առել մի շարք նախաձեռնություններ: Մշակվել և 1996 թ. կառավարության կողմից կաստատվել է համալսարանի օրինադրությունը՝ ապահովելով ԵՊՀ-ի ինքնավարությունը և օրենսդրական դաշտ ստեղծելով նրա գիտակրթական գործունեությունն ըստ հարկի իրականացնելու համար: Ստեղծվել և 1995 թ. սեպտեմբերից գործադրվում է ԵՊՀ-ի բարեփոխման (բազմաստիճան կրթության համակարգի անցման) ծրագիրը, որի նպատակը համալսարանական կրթության որակի՝ միջազգային չափանիշներին համապատասխան բարձրացումն ու համալսարանի դիպլոմի միջազգային պաշտոնական ճանաչման ձեռքբերումն է: Ընդլայնվել են կապերը արտասահմանյան և ԱՊՀ առաջատար մի շարք համալսարանների հետ: Նշանակալից են ռեկտորի ջանքերն ու ձեռքբերումները Արցախի պետական համալսարանի նյութատեխնիկական հիմքի հարստացման, կրթության և կառավարման պատշաճ մակարդակի ձևավորման գործում:

Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը միաժամանակ Հայաստանի բուժերի ղեկավարների խորհրդի նախագահն է: այս ոլորտում նրա ջանքերն ուղղված են հանրապետությունում բարձրագույն կրթության զարգացման հիմնադրույթների սշակմանը:

Ռ. Մարտիրոսյանը ճանաչված է նաև որպես հասարակական ակտիվ գործիչ: Իր գիտական, կազմակերպչական, մանկավարժական ու հասարակական արդյունավետ գործունեության համար նա արժանացել է մի շարք շքանշանների ու մեդալների: Այսօր էլ բազմավաստակ գիտնականն ու հասարակական գործիչը, կազմակերպիչն ու մանկավարժը մեծ ակունով շարունակում է իր արգասաբեր գործունեությունը ռադիոֆիզիկայի արդիական խնդիրների ուսումնասիրության, բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում:

Ամսագրի խմբագրական կոլեգիան, հեղինակները և ընթֆերցողները, շնորհավորելով ականավոր գիտնականին ծննդյան 60-ամյակի առթիվ, մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ու հայրենասուլեր գործունեություն: